Հայտարարություն

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց», « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյանի հիմնական դպրոց», « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարալանջի Հ.Թումանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ների միացյալ կառավարման խորհուր հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:
Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնայարգ դպրոց» ՊՈԱԿ–ում **2021թ. սեպտեմբերի 22-ից, մինչև հոկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև ժամը 16-ը,** բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021թ.հոկտեմբերի 25-ին, ժամը 13-ին,** «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի միջնայարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ.Լուսաղբյուր 1 փ.շենք 21:

Տեղեկությունների համար դիմել Լուսինե Քերոբյանին, հեռ. 098664876, էլ.հասցե՝lusaghbyur@yandex.ru: